Յետ աւուրցս լու եղեւ թէ Հոռոմն տիրեալ է զտեղիս Հապաշիցն, որ ասատէն առեալ զհրամանն եւ յայտնեալ այսու զչարութիւն, մինչև և զձեռս ի Սուրբ (Յակոբ) արկանէ թէ իմ է և առնու. և ոչ կարէ զի քաղաքացիք ոչ կամին։ Եւ յեղիազար[1]) վարդապետին, որ կայր մեր յեկեղեցի նստեալ, կացաք ընդ նմա. եկն Նոխուտզատէն զինով եւ խօսս ինչ արձակեաց անպատչաճս առ Վարդապետն՝ մի եւ երկու եւ այլ. յետ որոյ ասաց՝ Բաւ է, վերուցէ՛ք. և մերձակայք ի վերուցանելն սկսաւ զօրէնս եւ զհաւատս եւ այլ բազում հայհոյութիւն՝ մինչ ի գուռն[2]) և ի գուբսն։ Եւ առաւօտին (2 Նոյ.) արգիլեցին յեկեղեցոյն։ Յետ Դ աւուր գնալոյ Վարդապետին, եկն եմուտ յեկեղեցին խրատիւ միւսոցն ներհակ սոցին, զի կռիւ սահմանեսցի, որպէս զի ինքեանք կալցեն զեկեղեցին։

Եւ Դշի օր (7 Նոյ.) գնացին մերայինք առ Առաջնորդն վասն Նոխուտզատէին թէ Վասն է՞ր եղիր զնա յեկեղեցի. եւ անդ գտանեն նստեալ զէսիլն եւ զայնոսիկ որք անուանակիցք են Գ։ Եւ խօսից մէջ մտեալ էսիլզատէն թէ Զի՞նչ արար, և Մղտեսին ասէ. Դու երէց ես եւ մի՛ խառնիր ի բան մեր. եւ նոքա եւս սկսին գիպիլ ընդ իրեարս եւ լինի կռիւ մեծ։ Եւ Լաչինի որդի Սահակ ոմն ասէ ընդ Առաջնորդն զայն խօսք, որ սուպաչուն են ասացեալ թէ Կայ ոմն յՍրեւելից եւ ի վերայ մեր հրամանս առնէ, վասն է՞ր չիմ վերայ եղեալ ես։ Եւ նա ասէ. Դու ես ասեր, զքեզ բանադրեմ. և գիպին ընդ իրեար. և Տէր Ոսկեան ի նոցունց արհամարհէ մեծ՝ զՍահակն. Դու ո՞ր շուն ես որ զայդ ժպրհիս ասել ընդ Առաջնորդն. եւ ընդ միմեանս յարձակին և լինի կռիւ մեծ ևս, և հաչիւ լռեցուցեալ։ Եւ երեկոյիս ապա ի ժամ եկեալ

1) յեղնկ. 2) դւրն.